

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մեջ:

Օտարաբարդաբանքը գրվում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստ 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անցեալ թիւերէն եւրո-
պայում: Նամակ Գերմանիայից: Արտաքին լուրեր:
—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մօսկվայի հայոց բարեգործական
ընկերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարունակում ենք ստանալ Ռուսաստանի, Կով-
կասի և Անդրկովկասի գրեթէ բոլոր թէ մեծ և
թէ փոքր քաղաքներից լուրերով: Հնորձաւորա-
կան նամակներ «Մշակի» տառ տարվայ տարե-
կարծի առիթով: Այդ նամակները այնքան շատ
են, որ մեզ անհնարին է նրանց բոլորին տեղ
տալ մեր լրագրի էջերում:

Ստացանք Վլադիկավկասից, պ. Տիգրան Տե-
ր-Յարութիւնեանից 4 ռուբլ բաժանորդագին «Ժուր-
նալ դ'Օրիւն» լրագրի համար, իսկ Կարակուբից,
Եփրէյ Միրմանեանից, ստացանք նոյն նպատա-
կով 8 ռուբլ: Առաջվայ 690 ռուբլ գումարի հետ
կանի 702 ռուբլ:

ՄՕՍԿՎԱՅԻ ՍՏԱՆԳԱՆԵՐ Հետեալ նամակը մեր
լրագրի տառ տարվայ տարեկարծի առիթով: «Կս
հաւատացած եմ, որ «Մշակին» վիճակված է այ-
սուհեան հետգհեան առաջանալ. նրա ժողովրդա-
կանութիւնը անուրանալի է: Բարոյի հայրը-
նակներին բաժանորդագրութիւնը մեր բարեկամ-
ներին միտնաբերութիւն և յոյս է ներշնչում:
Ումանք, մինչև անգամ ձյանքիս գիտնական մարդ-
ընկերութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակները ինչպէս երևում է մե-
զանում սկսել են աւելի խնայական կերպով ըմ-
բռնել բարեգործական ընկերութիւնների նպատա-
կը և այն օրուտը, որ կարող էին դրանք արտա-
դրել հայ հասարակութեան համար: Բացի Բա-
ղուի և Նոր-Նախիջևանի ընկերութիւններից,
որոնց գործունէութիւնը պէտք է ասած՝ բաւա-
կանին անհետաքննելի է անցնում, վերջին երկու
տարվայ մէջ հիմնվել են Թիֆլիսում «Հայերէն
գրքերի հրատարակութեան ընկերութիւն» և «Բա-
րեգործական ընկերութիւն», որոնք իրանց կենտ-
րոնական գիրքով և գուցէ աւելի առատ եկա-
մուտի աղբիւրներով խոստանում են արդիւնաւէտ
գործունէութիւն: Այս օրերս Մօսկվայում ևս
լայս տեսակ մի «Նախագիծ Հայոց բարեգործա-
կան ընկերութեան», որի առթիւ և գրում ենք
ներկայ յօդուածը:

Մօսկվայ վաղ ժամանակից մի կիտրօն է հա-
յերի համար, որի նշանակութիւնը անկարելի է
հերքել: Դեռ Մեծին Պետրոսի ժամանակից
այստեղ հաստատված հայ վաճառականութիւնը
տարեց տարի աւելի և աւելի ընդլայնում էր իր
գործունէութիւնը, ձեռք բերելով բաւականին
հարստութիւն. ժողովրդի թիւն էլ աւելանում էր
—դրա ապացոյցը այն երեք եկեղեցիներն են,
որոնք այժմ կան Մօսկվայի զանազան թաղերում
և որոնցից մէկը երկու տարի առաջ մեծ հանդի-
սով տօնեց իր հարիւրամեայ յոբելեանը: Իսկ
այժմ Մօսկվայում ապրում է հայ վաճառա-
կանների կարելի է ասել ամենահարուստ դասը:
Բացի վաճառականութիւնից՝ այստեղի նշանաւոր
եղևյութներից մէկն էլ Լազարեան ձեռնարանն է,
որ այնպէս մեծ կրթողական նշանակութիւն է

կանցից, որոնք երկար տարիների միջոցում ուրա-
նում էին աշխարհիկ լեզուի քաղաքացիութեան
իրաւունքը, այժմ ուրախութեամբ կարգում են
«Մշակը» և բազմիցս ձեռն առաջնորդող յօդուած-
ները ու նրանց միջի գաղափարները մեր խօսակ-
ցութեան նիւթ են դառնում:

Մեզ գրում են ԱԲԱԼՔԱՆԱՔԻՅ յունկարի 4-ից,
որ այդտեղի ուսուցչական խումբը յունկարի 6-ին
տալու է կուրսի նախկին դասընկեր մի ներկայա-
ցում յօդուտ բեմի: Կը ներկայացնեն «Հնախոյ»
կատակերգութիւնը, երեք արարուածով և «Աշու-
նային երեկոյ» վոքով: Իսկ յունկարի 9-ին նոյն
դասընկեր օրիորդական ուսումնարանի առաջին
դաստանն աշակերտութիւնը կը ներկայացնեն
«Պոլուկուկուկու» վոքով: Առաջին անգամն է,
ասում է մեր թղթակիցը, որ Ախալքալաքում
օրիորդները բեմ են դուրս գալիս: Պիտաներից
առաջինը տղան է եղել 1857 թիւն վեհապետի
մէջ հրատարակված «Բազմալեզ» ամսագրի մէջ և
գրված է Կ. Պոլսի բարբառով: Ընկերութեան
ինդիքով այդ պիւսան փոխադրել է տեղական
բարբառով պ. Մառանկոկեանց:

Մեզ գրում են հետեալ: «Նոր-Բայազետի
երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը ստացաւ
յօդուտ դպրոցների, տեղիս ձկնորսութեան կա-
պալաւու, Թիֆլիսի քաղաքացի Վասիլ Մեղու-
նովից, 20 ռուբլ գումար, որ պարունը խոստացել է
վճարել ամեն տարի մեր դպրոցում չքաւոր աշա-
կերտներ ընդունելու համար»:

ԲԱՐՈՒԹԻՒՆ մի պարոն մեզ գրում է: «Վերջին
ժամանակ գաւառացի հայերը սկսել են պահանջ
գալ ղեպի ընթերցանութիւնը և ուղարկութեամբ
բերել են տալիս հայոց այլ և այլ գրքեր Թիֆլի-

սումնեց և ունի հայերի կեանքի համար, ձրիարար
կրթելով հազարաւոր աղքատ հայ մանուկներ և
ցրվելով նրանց ամեն կողմեր և երկիրներ: Եւ
չենք ասում ձեռնարանի տպարանի մասին, որ ան-
գնահատելի վաստակ ցույց տուց հայոց գրակա-
նութեանը իր բազմաթիւ աղբոցում հրատարա-
կութիւններով:—մինչև անգամ մի ժամանակ հա-
ւասարակ է մրցելով վեհապետի սուրբ Ղազար-
այ վանքի հետ մի ամբողջ շարք մեր կրօնաբե-
կան հեղինակների գրուածքները լայս ընծայելով:
—Յիսուս թաւանների վերջը և վաթմանի սկիզ-
բը մի էպոք է, որ երբեք մոռացվելու չէ մեր
նոր գրականութեան պատմութեան մէջ: Հիւսի-
սախայլ և «Հաւաքալ»—մէկը իբրեւ նոր սերուն-
դի աւետարներ, միւրը իբրեւ հնութեան բանակի
պաշտպան, — երես առ երես կանգնած՝ փըշ-
րում են միմանից դէմ իրանց ղեկերը, և այդ
արկունուէր պատերազմին հանդիսատեսն է կան-
դիլ ամբողջ հայ հասարակութիւնը՝ անհամբերու-
թեամբ սպասելով գործի վախճանին:—Այս վեհ
սեպարանը դարձեալ Մօսկվայում էր. միայն
Մօսկվայ կարող էր միջոց տալ մի ժամանակ
լայս տեսնելու երկու ստուար ամսագրերի, որին,
որոնք ինչպէս յայտնի է—շատ տարածված էին
ժողովրդի մէջ:—Եթէ սրանից յետոյ յիշելու լի-
նենք Մօսկվայի ուր ուսումնականներին, որպէս և
համալսարանի ու բարձրագոյն դպրոցներում ու-
սում աւանդ հայ երիտաւորութիւնը—այն ժա-
մանակ պարզ է, որ Մօսկվայի հայ հասարակու-
թիւնը աւելի քան միւս քաղաքներին միջոց ու-
նի և ընդունակ է՝ կասեց ուղղակի—պարտա-
կան է դեր խաղալ հայերի կրթութեան և լուսա-
ւորութեան գործում:

Հասարակութեան այդ բարոյական պարտա-
կանութեան իրադրութիւնը մասին դեռ 60 թիւակնա-
ներին խօսք կար. դեռ հանդուգնաւ Նազարեանը
խօսում էր Մօսկվայի հայերի մէջ ընկերու-
թիւն հիմնելու մասին: Այսուհետեւ երբ որ պա-
հանջներ աւելացան, երբ մի կողմից գրաւում են
մեր ուղադրութիւնը մեր տաճկահայոց եղբայրների

մէջ: Այդ բանը աչքի առջև ունենալով, շատ լա-
կը լինէր որ մեր պ. պ. գրականութեանը իրանց
տղովոյ յայտարարութիւնների մէջ միշտ յայտ-
նէին, թէ օտարաբարդացիները ինչքան ճանա-
պարհածախս պէտք է ուղարկեն այս կամ այն
գիրք բերել տալու համար»:

ԲԱՐՈՒԹԻՒՆ Մարդասիրական ընկերութեան նա-
խագահը խնդրում է մեզ տպել հետեալը: «Բարձ-
րագոյն հաստատեալ Հայոց Մարդասիրական Ըն-
կերութեան խորհրդական ժողովը պատիւ ունի
յայտնել ընկերութեան յարգելի անդամներին, որ
համաձայն կանոնադրութեան, ներկայ 1882 թիւ-
ն յունկարի 30-ին, շաբաթ օրը, երեկոյան, լինե-
լու է Մարդասիրական ընկերութեան տարեկան
ընդհանուր ժողովը, ընկերութեան դասընկեր
Այս ժողովում բացի սովորական պարագովներ-
նեղից լինելու են և խորհրդական ժողովի նախա-
գահի և անդամների ընտրութիւնները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՅԵԱԼ ԹՈՒՆԱԿԱՆԸ ԵՐԹՈՊԱՅՈՒՄ

Այս վերնագրով «Порядокъ» լրագիրը
տպել է հետեալ յօդուածը:

Անցեալ 1881 թուականը ոչ բազմաթիւ,
բայց նշանաւոր հեռքեր թողեց Եւրոպայի
քաղաքական դատմութեան մէջ: Այդ հեա-
քերը ընդհանրապէս միտնաբերական չեն,
նրանք մասամբ քողարկում են այն լուսաւոր
կողմերը, որոնք զարգարում են Եւրոպա-
կան ժողովուրդների հասարակական կեանքը:

Կարիքները, միւս կողմից՝ պանդուխտ և աղքատ
հայրենակիցների պարէն ու ճանապարհածախս
հոգալը, և ապա վերջին տարիները ուսումի և
արհեստի կարօտ օրիորդներին և երիտասարդնե-
րին օժանդակութիւն հասցնելը—ընկերութեան
կարօտութիւնը սկսաւ աւելի և աւելի զգալի
դառնալ: Եւ արհեստի տարի առաջ Մօսկվայի
հասարակական անկեղնոցի տարեկան ժողովում
ներկայացվեցան երկու առաջարկութիւն—մէկը
պ. Գանահանցից, որ առաջարկում էր ընդլայնել
անկեղնոցի § 4 յօդուածի գործադրութիւնը՝ տա-
րեկան անդամակցական տուրք նշանակելով, և
այդ գումարից նպաստ տալ չքաւոր հայերին որ-
պէս և երկսեռ կարօտ ուսանողներին. միւս առա-
ջարկութիւնը արթ. Տ. Սուրենեանցին էր, որ
«Попечительство при церкви» վերնագրով մի
նախագիծ էր պատրաստել իր նշանակութեամբ
դուցէ հաւասար մի բարեգործական ընկերու-
թեան:

Իսկոյն ընտրվեցաւ 5 անձերից բաղկացած մի
յանձնախումբ այս առաջարկութիւնները քննու-
թեան ենթարկելու. յանձնախումբը ունեցաւ նաև
երկու նիստ. բայց թէ ինչ եղբակցութեան եկաւ
նա—մինչև այսօր անցաւ մնաց հասարակութեան
ձեռքը:—Սակայն՝ թէ մի բարեգործական ընկե-
րութեան հիմնելու կարօտութիւնը այնու ամենայ-
նիս անհրաժեշտ է Մօսկվայի հայ հասարակու-
թեան համար—դրա ապացոյցը այս բոլոր փոր-
ձերի թուով կարելի է յիշել և այն «Նախագիծը»,
որ այս օրերս բաժանվեցաւ տեղիս հասարակու-
թեան անդամներին քննութեան համար—մեծ պ.
Սուրենեանցին կողմից: Այս պարունը՝ որ
ինչպէս ասում են եղել է Նոր-Նախիջևանի «Բա-
րեգործական ընկ.» հիմնադրիներից մէկը—այժմ
մեծ եռանդով աշխատում է ընդհանուր համա-
ձայնութեամբ և ձեռնառութեամբ հաստատել այդ-
պիսի մի ընկերութիւն և Մօսկվայում:

Նախագիծ հետ, որի վերնագիրն է «Проектъ Ус-
тава Московскаго Армянскаго благотворитель-
наго Общества Св. Григорія Просвѣтителя»

ձեւարիտ է 1881 թուականին վտանգա-
ւոր պատերազմներ և անհամաձայնութիւն-
ներ չեն պատահել պետութիւնների մէջ:
Մեծ պետութիւնների կառավարութիւններ-
ը մրցում էին, յայտնելով իրանց փոխա-
դարձ խաղաղասիրական զգացմունքները և
պետական մարդիկ ակամայ իրանց ամբողջ
ուշադրութիւնը նուիրում էին ներքին հար-
ցերին և պակասութիւններին, որոնց չափե-
րը ընդարձակվում էին քաղաքական կազմա-
կերպութեան զանազան պակասութիւնների
պատճառով: Զօրքերը և թիւանօթիւններ չէին
գործադրվում, բայց նոյն իսկ նրանց զոյու-
թիւնը ժողովուրդների և նրանց կառավա-
րիչների անհամաձայնութեան և անբաւական-
նութեան աղբիւր էին ներկայացնում: Զին-
ւորականութիւնը, պահանջելով ահագին
ոյժեր և միջոցներ բոլորովին անպտուղ և
վնասակար գործի համար, վնասում է ժո-
ղովուրդների անտեսական դրութեանը: Զին-
ւորական տուրքերի ծանրութիւնը, արդիւ-
նաբերութեան դժուարութիւնը, պարապ
ձեռքերի և անբաւական մաքերի ահագին
բազմութիւնը ծնեցնում են անբաւականու-
թիւն և վրդովմունք, որոնք այսպէս թէ
այնպէս ներգործում են հասարակական
կեանքի ընթացքի վրա: Անհաւատարմու-
թիւնը և թշնամութիւնը մուտք են գործել
ներքին քաղաքականութեան մէջ, հասարա-
կութեան և նրա հաւատարմատար ղեկա-
վարների մէջ խուլ պատերազմ է կատար-

—և որը բաղկացած է 38 յօդուածներից, պ.
Սուրենեանցին ուղարկել է մի մի նամակ, ուր
համառօտաբար հաղորդում է թէ ինչ հանգա-
մանքներից զրգոված նա առաջարկում է այդպիսի
մի «բարեգործ. ընկ.» հիմնել. և դիմելով հասա-
րակութեանը երկու շաբաթվայ մէջ իր նախագիծը
քննելու—հրաւիրում է անուհետեւ միասին խոր-
հրդակցելու: «Կամով հաւատարմ, ասում է նա իր
նամակի վերջում, որ առաջարկութեանս նպատա-
կը՝ գրականով բոլորեցունց անկեղծ համակրու-
թիւնը, —կը միայնէ մի օր մեր հայրենակիցներին
(մօսկովաբնակ) ամենայն խնամքով մտածելու և
հաստատ ու երկարատեւ միջոցներ հոգալու մեր
տնանի ու թշուառ աղբայրների, որպէս և առ-
հասարակ ամեն աղբայրն անհրաժեշտ կարիք-
ների համար»:

Մենք կաշխատենք հաղորդել «Մշակի» ընթեր-
ցողներին յիշեալ նախագիծ այն էական կէտերը,
որոնք իրանց կարեւորութեամբ արժանի են ու-
շադրութեան և հետաքննութեան:—Երկու հան-
գամանք նկատողութեան առած՝ մենք գրում ենք
ներկայ յօդուածը. նախ—ընդհանուր ժողովում
(Մօսկվայի հայերի), որ ինչպէս երևում է՝ կը
լինի բաւականին բազմաթիւ—դժուար է մի առ-
մի պարզել այս կամ այն խնդիրը. վիճաբանու-
թիւնը շատ անգամ կարող է չլիթթել և մի կողմ
թողնելով կարեւոր հարցեր՝ պարապել երկրորդա-
կան և գուցէ երրորդական հարցերով: Մամուլի
մէջ այդ խնդիրները աւելի պայծառութեամբ կա-
րելի է արտայայտել: Երկրորդ—այժմիս խօսելով
մի երեսից վրա, ինչպէս Մօսկվայում հիմնվելի
բարեգործական ընկերութիւնն է. մանաւանդ որ
այդ «բարեգործ. ընկ.»—ինչպէս երևում է պ.
Սուրենեանցին նամակից—«մշտապէս օգնութիւն
պէտք է հասցնել ոչ միայն վերեւում յիշած դեպ-
քերում (Մօսկվայի հայոց կարիքներին), այլ և
եթէ կարելի է՝ Մօսկվայի սահմաններէ դուրս ևս տարածել իր խնամած ու ձեռ-

վում, որի մէջ վերջինները ամեն կերպ ապահոված են: Հասարակական նշանաւոր շահերի գլուխն անցած մարդիկ օգտուած են իրանց գրութեանց երկրի մէջ իրանց անձնական ցանկութիւնները և կարծիքները հաստատելու համար: Վարչութիւնը չէ կատարում իր բնական պարտականութիւնները և դառնում է կառավարչական կուսակցութիւնների գործիք:

Ի հարկէ ամեն տեղ այնպիսի անբաւական անցքեր չեն պատահում, ինչպէս վերջին ժամանակներում Պրուսիայում: Բայց նոյնանման գործեր նկատուում են և այն պետութիւններին մէջ:

Մինչև անգամ Ֆրանսիայի մէջ, չը նայելով կառավարչական հանրապետական ձևին, կառավարիչների և կառավարողների մէջ անհամաձայնութիւն է տիրում:

Գերմանիայի մէջ պետական ծերունի կանցլերը վաղցնում է իր սեփական շատ աստիճանները աշխատանքով ձեռք բերած հետեւանքները և բարի պտուղները: Նա հասցրեց երկիրը նշանաւոր դժուարութիւնների իր յամառ ինքնիշխանութեամբ, իր փորձերով ստիպել հասարակական կարծիքին եւթութարկել նրա վերահսկողող նախագիծներին և իր դիպլոմատական հնարած ձեռով, որ հեռացրեց նրանից բոլոր կուսակցութիւններին: Իշխան Բիսմարկ արտաքին քաղաքականութեան արհեստական ձեւերը փորձեց գործադրել սօցիալական հարցերի վերաբերութեամբ և դրա հետեւանքն այն եղաւ, որ նա այժմ օգնութիւն է խնդրում իր ռիտերմ թշնամի կղերականներին: Վերջին ընտրութիւնները Գերմանիայի մէջ ապացուցին, որ բռնութիւնը միշտ վատ հետեւանքներ է ունենում, եթէ մինչև անգամ նրան գործողը այնպիսի հեղինակութիւն և նշանակութիւն ունեցող անձն լինի, ինչպէս իշխան Բիսմարկն է: Տեսեալական վերահսկողութիւնները, որոնք կարող

էին իրագործվել աւելի արգարացի և իրաւացի ճանապարհով, այժմ յետաձգված են: Տնտեսական հարցերի տեղ Գերմանիայի մէջ առաջ է բերված պապական խնդիրը, որպէս զի կղերական կուսակցութիւնը անցնի կառավարութեան կողմը և նրա պաշտպան լինի բոյստադի մէջ սօցիալական խնդիրների քննութեան ժամանակ: Գերմանական կառավարութիւնը բացի այդ ի նկատի ունի արձակել բայեստադը և նոր ընտրութիւններ նշանակել, բայց այդ վտանգաւոր միջոցից ոչ զբաւ հետեւանքների չէ սպասում: Բաւական դժուար գրութեան մէջ է Գերմանիան, որ արտաքաւստ հզօր և սպառնալի է, բայց որի ներքին վիճակը անհանգիստ է լինելով:

Արեւմտեան միւս ժողովուրդները աւելի բարեկեցիկ հանգամանքներով են շրջապատված: Ֆրանսիայի մէջ վերջապէս կազմվեցաւ այնպիսի մի կառավարութիւն, որ երկիրը վաղուց էր ցանկանում: Ժիւլ Ֆերրիի անդունդ միջնադարեան յետ կազմվեցաւ Գաւրեստայի կառավարութիւնը: Նոր միջնադարեան զեռ ևս ոչնչով չարգարացրեց ընդհանուր յոյսերը: Ֆրանսիական կառավարութիւնը չը կարողացաւ զգուշ իր պատերազմական ձգտումները: Նա վճռեց իր վերակազմված զօրքերի ոյժը փորձել հիւսիսային Աֆրիկայի մէջ: Տունիսի արշաւանքը, որ սկսվեցաւ և վատ զեկավարվեցաւ հանրապետականներից, ծանրանում է Ֆրանսիայի փայլուն գրութեան վրա:

Վերջին ժամանակներում Ֆրանսիան բաւական մօտ յարաբերութիւններ հաստատել Անգլիայի հետ, որպէս զի այդ դաշնակցութիւնը ընդդիմացի է երեք պետութիւնների արեւելեան դաշնակցութեանը, որի հետ, իշխան Բիսմարկի աշխատանքների շնորհիւ, պէտք է միանային խաղախան և թիւրքիան:

Անգլիան զբաղված է իրանդական գոր-

ծերով և հեռու է մնում միջազգային հարցերից: Գլխաւոր միջնադարեան միջոցները միջաւարտաբն ստիպողական միջոցները միջոցներ անտեսական բարեփոխված վերահսկողութեան պաշտպանութեան մասին հրատարակված օրէնքից յետոյ, հրատարակվեցաւ բաւական ազատամիտ օրէնք Նյուանդիայի համար, որ բաւականութիւն տուեց իրանդական Ֆերմերների գլխաւոր պահանջներին: Կառավարչական երկու ձեւերի այդպիսի միութիւնը չը հանգստացրեց Նյուանդիային և նրան հասցրեց անիշխանութեանը: Անգլիական կառավարչական զեռնը և նրանց պաշտպանող իշխանութեան զեռնը շարժումը աւելի աստիպացաւ և դարձեալ ապացուցեց բացառական և անբաւական օրէնքների միջնադար լինելը, եթէ կառավարութիւնը մինչև անգամ ամենաբարի ցանկութիւններ ունենայ:

Աւստրո-Ունգարիան աւելի եռանդով բաւական հետեւել գերմանական կառավարութեան քաղաքականութեանը, աշխատելով պահպանել ներքին հասարակարկութիւնը իր հպատակ և միմեանց թշնամի ազդութիւնների մէջ: Փորձվեցաւ խաղախան մասնակցեց անկաւարտ-գերմանական դաշնակցութեանը, մինչև անգամ իտալական թաւաւորը այցելեց Վիեննա, բայց ոչ ոք փորձը օչնչեց հետեւանքներ չունեցաւ: Գերմանական կանցլերը Վատիկանի բարեկամութիւնը ձեռք բերելու համար սկսեց խօսել խաղախանի զեռն և այդ փոփոխութիւնը անցապաղ արձագանք դաւաւ Վիեննայի մէջ:

Այդպէս է եւրօպայի արեւմտեան չորս պետութիւնների գրութիւնը: Ընդհանրապէս 1881 թուականը շատ բաղաւոր չէր եւրօպական հասարակութեան համար:

քը: Իսկ Մոսկովայի սահմաններից դուրս զբաղվել կարիքների մասին պէտք է կարծել—մեր մասնուր շատ հիմնաւոր տեղեկութիւններ կարող էր հազորդել և դրանով շատ նպաստած կը լինէր յիշատակ նախագիծը բազմակողմանի մշակվելուն:

Նախապէս մենք կը կանգնենք մի յօդուածի վրա, որ սկզբում ինչ ինչ է և որը գիտնանցիկ տարի բաւականին արժուկ հանցք թիֆլիսում: Խնդիրը այստեղ «հայ-լուսաւորչական» խօսքի մասին է: Պ. Մուլլան-Հաճի նախագիծը առաջին յօդուածը պարզօրէն չեղարկում է, թէ «օժանդակութիւն հասցնել չքաւոր հայ-լուսաւորչականներին (sic), կը թելը դրանց զաւակներին և ամեն միջոցով բարոյան (բարձիւն) հայ-լուսաւորչականներին վիճակը»: Յետոյ § 10 կրկին ուղղակի ասած է, թէ «ընկերութեան իսկական անդամները կարող են լինել միայն հայ-լուսաւորչական և կանան և բոլոր»:

Կարծում ենք, որ անցաւ այն ժամանակը, երբ լուսաւորչական հայերի և նրանց պաշտպան համազգայնների մէջ ոչ միայն անապիկ խտրութիւն, այլ և անհաշտ թշնամութիւն կար: Երբ կրօնը իրաջանելով մարդկային և ազգային պարտաճանաչութեան զգացմունքները—միակ նեղ զօգնատիւքական հարցերով էր պարսպեցնել տալիս մեզ, մի կողմ թողած ազգային-արեւմտական կապերը, մոռացած ընդհանուր կենսական շահերը, շատ անգամ նաև ոտի տակ առած ազգութեան ապագան—մենք անչափ ուրախանում էինք, երբ կարող էինք կրօնական մի աննշան ծէսից կամ արարողութիւնից հերետիկոսութեան նշան հետեւանքներ և նորով կարգաւոր հասարակութեան մի մասի վրա՝ երկպառակութեան ձգել նրա մէջ, բաժանել նրա անդամները միմեանցից և մինչև անգամ խորթացնել, օտարացնել դրանց հայ ազգութիւնից: Ինչ էր Հաւաւոր, եթէ ոչ այս կրտսարեւրողութեան ամենապայլուն ներկայացուցիչներից մէկը: Բայց անցնում է, ասում ենք, այդ անարկու ժամանակը և այժմ այդ անձուրի երկուքը սկսում է փոփոխել, նրա զօրութիւնը սկսում է թուլանալ

և կամաց կամաց տեղի տալ ազգային դադարի արեւել իմացականապէս ըմբռնելուն: Կանցնի մի երկու տեղանոց և դուք կը տեսնէք, որ մեղանում կրօնի դադարի կը սահմանափակվի միայն անհատի խղճմունքով: Իսկ ազգային դադարի կը ստանայ այն նշանակութիւնը, ինչ որ նա բնատուր է բոլոր յառաջակէմ քաղաքակրթւթ ազգութիւնի մէջ: Վերջապէս բաւական է ասել, որ միայն ազգային դադարի կարող է առաջանալ մի ազգ և նրան կիսնք և զօրութիւն տալ: Իսկ կրօնի դադարի շատ-շատ մի ազանդ կարող է տեղեկել—մի կրօնական հասարակութիւն: Աւստի մի տարօրէնակ երեւոյթ է խտրութիւն անկ այժմ հայերի մէջ և մի բարեբոյր, ընկերութիւն սահմանափակել միայն լուսաւորչական հայերի մասնակցութեամբ մենք կարծում ենք ամենին խորհուրդ և իմք չունի: Մենք մինչև անգամ աւելորդ ենք համարում այստեղ երկար ու բարակ խօսելու փառտեր առաջ բերել մեր պաշտպանած մտքի օգուտը—խնդիրը մեզ համար լոյսի պէս պարզ է: մանաւանդ որ մեր լրագրութիւնը բաւական ժամանակ պարտաւորում էր այդ խնդրով: Յուսով ենք, որ եթէ խտրութեան կողմ մի ուղի միայն էր դառնում, շատ ծանրակշիւ փառտերի վրա պէտք է հիմնել իրանց կարծիքը: Արեւել, որ այս կէտի վրա Մոսկուայի հասարակութիւնը դարձնել իր ամենաբարձր ուղղութիւնը:

Այժմ կանցնենք մի քանի կէտերին՝ ընկերութեան նպատակին վերաբերեալ: Ինչպէս երեւում է կանոնադրութեան նախագիծից՝ ընկերութեան նպատակը լինելու է. 1) «օգնել չքաւոր հայ-լուսաւորչականներին ընտանիքներին», 2) «հողաւոր քաւոր հայերի որդից կրթութեան մասին, տեղաւորելով նրանց ընդհանուր ուսումնարաններում, տեղաւորական և արհեստարարական (ремесленный) դպրոցներում», 3) «օգնել ամեն մի ձեռնարկութեան, որ կարող է նպաստել հայերի վիճակի բարելոմը և նրանց մէջ լուսաւորութիւն տարածելուն», 4) «օգտակար գրքեր բաժանել աղքատներին ձրաբար»:

Մեր կարծիքով այս չորս կէտերից՝ երկուրդը ամենակարեւոր է և եթէ հիմնովի ընկերութիւնը կարողանար միայն այդ կէտը բաւարարելու իրագործել—այդ ևս մեծ գործ կը լինէր: Բայց այս անչ պայմանով միայն, որ յօդուածը մշակվել է նրա զօրութիւնը ընդարձակելով: Երկրորդ կէտի կարեւորութիւնը ասելի անկերը կը լինի, եթէ յիշենք որ մեր միւս բարեբոյրական ընկերութիւնները սովորաբար 1, 3 և 4 կէտերում նշանակած նպատակներին են դիմում, երկրորդ կէտի նպատակը մասամբ անմասնելի (կամ դժուար մատչելի) համարելով իրանց նուազ միջոցներին: Բայց թէ ինչու յիշեալ 4 կէտերից առաւելութիւն արեւելք երկրորդին՝ մինչև անգամ նրա իրագործումը բաւական համարելով մի ընկերութեան նպատակների համար—կաշխատենք պարզել մի քանի խօսքով:

Կարծում ենք չենք սխալվի, եթէ հայոց կեանքին անհրաժեշտ և մեր նոր սերնդի ոգուն համաձայն ուղղութիւնը որդեկու լինենք երկու խօսքով: Ուսում և արհեստ—Առաջինը վաղուց արդէն անհրաժեշտ պահանջ է դարձած մեզանում, վերջին տասն տարեկան մէջ ցոյց տուած մեծ յառաջդիմութիւնը այդ ապագիւղում շատացրել է մեր ուսումնարանների թիւը և բաւականին կարող է բերել թէ դպրոցների ծրագրերը և թէ դաստիարակութեան եղանակը, թէ և այնու ամենայնիւ պաւկատութիւնների և խաչոր պակասութիւնների դեռ շատ կան մեր դպրոցական կեանքում: Մոսկովայի բարեւ, ընկ. այս դէպքում կարող էր անգնահատել ծառայութիւն մատուցանել հայ հասարակութիւնները նախ՝ ուսուցիչներ ու մանկավարժներ պատրաստելով, որոնց կարօտութիւնը շատ զգալի է մեզանում, և ապա՝ չքաւոր հայ ուսումնորութեանը օգնութիւն հասցնելով: Այս երկու կէտը ըստ երեւութի՝ աննշան բայց և այնպէս ամփոփում են մեր բոլոր դպրոցական և հասարակական կեանքի ապագայ գործունէութիւնը և գործիչներին: Վիստ, որ ինչ որ անցնիք ուսման մասին, կարող չենք ասել և՛ արհեստի մասին, մեր

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ
Բերլին, 15/1 82
Այսօր քաղաքականութիւնը, որ վերջին ժամանակները այստեղ ամենքին զխաւարապէս զբղեցնում է, կուսակցութիւնների պատերազմը, չափազանց զբոլած ատորձանի է հասել, պրոսական Լանդտագի բացման խնդիրը և երկէ կատարված բացումը, իշխան Բիսմարկի բարեբաւական, բայց մի և նոյն ժամանակ կղերական կամակոր քաղաքականութիւնը, կղերական կուսակցութեան գործերի յաջող ընթացքը և միւսին հետեւող յաղթութիւնները, ընտրված ընտրվելու կաթօղիկ եպիսկոպոսների ընդունելութիւնները, ազատամիտ կուսակցութեան բուն վճռական դիրքը կառավարութեան դիմացը պէն, և այն մի կողմ թողնելով, դիտարկութիւնում մտցնել ընթերցողին մի առաւել համեստ փոքր չըման, ուր գլխաւորապէս հաշտութիւն տիրում, ուր աշխատանքն է դէվլը—Գերմանիայի ընդհանրական ընկերութիւնը հաշտութիւն է ամփոփում անգամ բայեստադի տան համեստ դաժնութեամբ, ուր ցերեկով ապաստան նի օրիորդաց արուեստագործական ուսումնարանը գլխաւորապէս լցված է լինում դաժնութեամբ ժամանակ, բայց այն երկուց, երբ հաւաքվում անթիւօգտօգիական ընկերութիւնը անհետիւ զանազան նստարանները բաւական խիտ բունք են լինում, թէ և մեծ մասը ներկայ գտնվողին աշխատում է տեղ գտնել նախագահի սեղանից քան կարելի է մօտ: Նիստը պաշտօնապէս պիտի օրէնք 7 ժամին, բայց «ճանապարհական քաւոր ժամը», ինչպէս ասում են այստեղ, անցնում է 7 1/4 ժամին, զարմանալի ճշգրտութեամբ երեւում դաժնութեամբ նախագահը, թիֆլիցիներին էլ ծանու պրօֆեսոր Վիրխով: Նստերը միշտ շատ կենդան և հետաքրքրական են լինում, մեծ մասամբ հզօրացնելով շատ կարծ, բայց անհետակ են և չհապիւ է պատահում, որ մի դատաւարութիւն ամբողջ երկուց լրացնէ: Բայց այսպէս եղաւ վերջին անգամ: Տարեկան հաշիւը ներկայացնելուց, քանի նամակների ու գրքերի բովանդակութիւն ընկերութեանը հաղորդելուց յետոյ, ինքն նախագահ բարձրացաւ ամբօնի վրա, որի մօտ կէտին արած կողմանի մեծ 10 վերտանոց քարտի և նոյնպէս պ. Զայդլիցի կողմանի բանկէշնից եղերը ներկայացնող քարտերը: Պ. Վիրխովի որ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԲԱՐԵԿԱՍ ՄԱՆԿԱՆՑ»

Այս ֆերմայով բանալով երևանումն զբա-
վաճառանոց՝ կցերով նորա հետ ուսումնա-
րանական, գիւտական, նկարչական և կազ-
մարարական իրերէններ խանութ, յանձն եւ
առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից ե-
րևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւ-
ղերի գիւտասաններին և ուսումնարաններին
շատ ձեռնառու գներով և պայմաններով:

Ընդունում եմ տպագրել տալու բաններ,
ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցե-
տոմսեր, բրօշուրներ, նաև զբերք, ամենատար-
ժան վարձով:

Ինչ մօտ է գտանվում իմ հրատարակած
«Տնային բժշկական մարմնամարզութեան»
զբոյնի պահեստը:

Իմ հասցեն. Գ. Զրիվան. Н. Симео-
нянцу, магазинъ. «Другъ-Дѣтей».

Մի ուսուցիչ, որ ուսումնաւարտել է
գիմնազիումում և ունի դիպլոմ՝ ցանկա-
նում է մասնաւոր դասեր ունենալ:

Հարցնել «Մշակ» խմբագրատանը:
3—5

ՎԵՐԱԳՈՒՆԵՐ 4 ր., ծրծռներ 1 ր
ծալիով ամրոտներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱՌՈՒ
4 ր., ԲԱՋԱՅԱՌՈՒ-ՄԱՀԱԿԱՆ 10 րուր և
աւելի, թէյի բաժաններ 25 և 30 կ., մի
աման ջրոցներ 50 կ., պատկերա ծխոցների
համար 60 կ. Փոշուր, անգլիական ՎԱՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱ-
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—
1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
1,000 ՄԱՀԱԿԱՆԵՐ 5 ր.—35 ր., 400
արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէլօլեր
4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԿԱՆՈՎ, 10,000
ֆոշուր թէյ թէյաՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.: եր
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: 69—100

ԾԱՆՎՈՒՄ ԵՆ 25% ԷՓԱՆ
քան թէ ուրիշ տեղ. Թէճ, կակաօ, ՇՈՎՈԼԱԿ,
բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ,
բաժաններ, բօկաններ, թէյամաններ, սու-
ղօններ, ՄԱՏՈՒՅԱՐԱՆԵՐ, երես լուսնալու-
ամաններ, ԿՈՂՊԵՐՆԵՐ, ԶԻՆՏԱԿԱՆԵՐ,
զրալներ, զանաւներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ,
ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱ-
ՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ,
կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, ամաններ, ուլթաներ, ՄԱՀ-
ԱԿԱՆԵՐ, երեսբիւրներ, թաշկինակներ,
կանանց գուլբաներ, մարգիւրանց գուլբաներ,
տուպեաի սպօն, հոտաւէտ ջրեր, շերբետ,
ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտ-
վէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ աւար-
կաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականնե-
րին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է
ԹԷՅ. պուլբերով 40, 46, 52, 58, ր.,
խիլ ֆուշուրով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20
կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80
կ., խիլ ամենաբարձր թէյը ֆուշուր 2 ր.
քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:
ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ԶՈԿ-ԲՈՐ
(chokl bore) George Dau-ի գործարա-
նից 120 ր., բէլօլերներ 4—34 ր., ԲՈՒԼ-
ԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամ-
բեր 65 ր., շերբիլի գանակներ 3 ր. 50
կ. զիւլօններ, ալբոմներ կիսագույն, ֆիլտրա-
ներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան-
ների և բէլօլերների թիֆլիսում:
79—100

ԹԻՖԼԻՍ նոր եկած ԳՐԱՊԱՀ, ցանկանում
է գործնական կերպով դասեր տալ ԻՏԱԼԱ-
ԿԱՆ ԿՐԿԱԿԻ ԳՐԱՊԱՀՈՒԹԵԱՆ:

Մանրամասներ կարելի է ամեն օր իմա-
նալ ժամը 3-ից մինչև 4 կեսօրից յետոյ,
Անանովի տանը № 15, Գրիբօեդօվսկի, նախ-
կին Կոմենդանտսկի փողոցի վրա, № 17
բնակարանում:
3—3

ԿՈՆՖԵՏՆԵՐ ՀԱՅԻ ԳԵՄ Փոշուր 50,
70 և 90 կ., Պերօլայա կրուպա և սագո
10 կ., ԽԱՌԱՐ 50 կ., մուրաբաներ 50 կ.,
Փուշուր 2 ր. 50 կ., պօլօվիներ 2 ր., չը
թըշվաղ վերաբրուներ 6 ր.: Կօրմանի նըշըշ-
տաւ 18 կ. Փոշուր: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒ-
ԹԻ ՄԷՋ:
5—5

ԱՐԴԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի զրոյ ՎՈՒՉԵՏԻՉԻ
«ДВѢ ЕЛКН» մասնկալան զբոյնի
հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕ-
ՆԱՍՍԱ» անունով:

Այս զբոյնը ընդունել էր տպագրելու
Հայ երէն գրքերի հրատարակու-
թեան ընկերութիւնը. բայց իրա-
նից անկախ պատճառներով ինքն ընկերու-
թիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու:
Տպագրելու է Հայ տարիքի թղթի
վերայ խոշոր տարիքով:

Գինն է 20 ԿՈՊԵԿ:

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնա-
կան գրավաճառանոցից և թէ՛ թարգմա-
նողից՝ հետեւեալ հասցեով:

Тифлисъ—на Аслабартъ Ивану Пет-
ровичу Назарянцъ.

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ԼՐԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿՈՒՄ

Բաժանորդ գրվում են Զմիւռ-
նայի «ԱՐԵՆԵԼԵԱՆ ՄԱՄՈՒ» քաղաքական
և գրականական հայ ամսագրին. 12 տե-
րակների գինը 10 րուրի է:

Հասցեն. Тифлисъ, Агентство В. Ша-
вердова.

8—10

Վ ա ճ ա Վ ու լ մ են 15,000 ամաններ
առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000
երուսաղի բաժաններ 25 կ. հատը,
10,000 բօկալ և բաժաններ 10 կ. հա-
տը, 10,000 մատուցարաններ և կող-
պէքներ 15 կ. հատը, 10,000 սսեղ
8—40 կ. հարկերը, 10,000 պինակներ
5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես
1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա
60 կ.—2 ր. արշինը, 2,000 զիւլօն մա-
տիտներ և զրչակիթեր 8 կ. զիւլօնը,
2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10
կ. ֆուշուր, 1000 ֆուշուր բէլօլօկա 50 կ.
ֆուշուր, 600 անգլիական բէլօլօկի
նկր 4—34 ր. հատը, 300 անգլիական
հրացաններ 20—100 ր. հատը, զրապ,
տրիկօ, ալբոմներ, ձմեռայն պալատներ,
զիւլարկներ, վարիկներ, հաղուստ կէս
գնով: Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: Նշն տեղը ծախվում
է ծովային ԽՈՏ պուլբ 2 ր. 50 կ.:
35—60

Կովկասեան զարոյաց հոգաբարձուներէն շատերը՝ մեր հրատարակութիւններն և
զատազբերը ձեռք բերելու համար միշտ մեզի Ռոստով (Գօնի վերայ) քաղաքը գիմելով
և ճանապարհի համար աւելի ծախք վճարելով, նոցա զիւրութեան համար հարկաւոր
համարեցին յայտնել, որ այն զբերը կարող են ստանալ նաև մեր եղբորից, որոյ հաս-
ցեն է. Тифлисъ, Григорію Абрамовичу Теръ-Абрамянъ, Ольгинская улица,
д. № 3.

Իսկ նորա մօտ անուամբ զբերը սքա են.
ԱՅՐԵՆԵԼԵԱՆ ՆՈՐ, 75 վիմատիպ պատկերներով 15
ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ ուսու լեզուի 50
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ հայերէն, ուսուրէն և ֆրանսերէն 50
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ բարոյական ուսմանց, ազգային գիտելեաց և զուարճա-
ւի պատմութեանց 1 —
ԸՆՏՐԻ ԱՌԱԿՆԵՐ եղովպոսի և ֆոլիովի հանդերձ բարոյական խոր-
հրդածութեամբ, 20 վիմատիպ պատկերներով 60
ՓԱՍՏ, կատակերգութիւն 3 արարվածով 30
ԹԵԿԱՐԱՆ, որ է «կանան սաղմոս» 5
ՅՈՎԱԼՓ Պ. կենսագրութիւն հանդերձ պատկերաւ 25
ՆԵՐՍԷՍ Ե. կենսագրութիւն հանդերձ պատկերաւ 25
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ (սակաւագիւս) 1 —
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, երրորդ տիպ. 24 վիմատիպ պատկերներով 1 —

Բազմաթիւ օրինակներ գնողներուն նոյն գինովը կը լինի, ինչ որ տպուած է մեր
1882 թուականի օրացուցին մէջ:

Տէր տպարանի և վիմագրատան Յովհ. Տէր Աբրահամեան
(հ. շ.) 2—8

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ»
առաջին հատորը (ա. զբոյնի), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողո-
ված նրեանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. զբոյնի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մանի նորա
բ. զբոյնը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնու-
հետեւ ձեռնամուկ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատա-
րակութեան—ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱՍՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՐԵՐԻ, ԱՆԵՐԵՐԵՐԻ, ՕՐՀՆՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս
առանձին զբոյններով:

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համագրայինք չեն զրանայ իւ-
րեանց կարեաց չափ աջակից լինելու ինչ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաւոր չիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակից-
ներ՝ այսուհետեւ տպագրուելի բոլոր զբոյններից մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի
այս նոցա ազգ-անունները կը տպագրուեն զբոյնի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք
այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան
իրանց ժողովածուն վաճառել թո՛ղ բարեհաճին յայտնել իրանց պայմանները:

Դիւթերը հարկաւոր է գրել (զրաճը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տե-
ղական բարբառով: Գնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացա-
րութիւնները:

Իմ հասցեն՝ Вагаршанатъ. Тиграну Навасармянцъ. Տ. Նաւասարդեանց.

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կառօրիկաց փողոցի անկիւնում ՄԻ-
ԳԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԳՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացի կարող են գիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу
Н. Теръ-Никогосову.

124—150

ОТКРЫТА ПОДПСКА
на 1882 годъ
НА БОЛЬШУЮ ЕЖЕДНЕВНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ, ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ
„РУССКІЙ КУРЬЕРЪ“
ГОДЪ ТРЕТІЙ.

У С Л О В І Я П О Д П И С К И:
Съ доставкою въ москвѣ: Съ пересылкою въ города:

На 12 мѣс. 8 р. 50 к.	На 6 мѣс. 4 р. 50 к.	На 12 мѣс. 9 р. — к.	На 6 мѣс. 5 р. — к.
» 11 » 8 » — »	» 5 » 3 » 90 »	» 11 » 8 » 50 »	» 5 » 4 » 60 »
» 10 » 7 » 50 »	» 4 » 3 » 25 »	» 10 » 8 » — »	» 4 » 3 » 70 »
» 9 » 6 » 75 »	» 3 » 2 » 50 »	» 9 » 7 » 40 »	» 3 » 2 » 75 »
» 8 » 6 » — »	» 2 » 1 » 90 »	» 8 » 6 » 70 »	» 2 » 2 » — »
» 7 » 5 » 25 »	» 1 » 1 » — »	» 7 » 5 » 90 »	» 1 » 1 » 10 »

За границу: на 12 м. 17 р., на 6 м. 9 р., на 3 м. 5 р., на 1 м. 2 р.
Подписка принимается въ конторѣ изданія: Москва, Москворѣцкій мостъ, д. Н.
П. Ланина, въ отдѣленіи конторы—близъ Петровки, Столешниковъ пер.,
д. Карзинкина, въ извѣстныхъ книжныхъ магазинахъ Москвы и С.-Петер-
бурга и въ Парижѣ—Rue Clément, 4, Adam.
Гг. иногородные благоволятъ адресоваться преимущественно въ кон-
тору изданія „РУССКІЙ КУРЬЕРЪ“
Редакторъ-Издатель Н. П. Ланинъ. 3—3